ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/78

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.06.2018թ. թիվ 03/26-3/10747-18 գրությամբ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 11.06.2018թ. թիվ 1/18-3/[1235950]-18 գրության հիման վրա, 13.06.2018թ. «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարը 11.06.2018թ. թիվ 1/18-3/[1235950]-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/31» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի՝ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01553931, հասցե՝ ք. Երևան, Պարոնյան փող., 28/2 շենք , էլ.հասցե. info@ligatech.am) մոտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով նախատեսված հիմքերը՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը (մասնակիցը իրավունք չուներ մասնակցել ընթացակարգին, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ ներկայացրել է 105000 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունները կազմել են 3717196 ՀՀ դրամ)»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Լիգա-Տեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լիգա-Տեք» ՍՊԸ-ն 18.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/31 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2018թ. կայացած հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրությամբ ֆիկսված «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի ՀՀ

պետական բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունն առաջացել է «Լիգա-Տեք» ՍՊԸ-ից անկախ, ֆորս մաժորային իրադարձությունների հետևանքով:

«Լիգա-Տեք» ՍՊԸ-ն 02.05.2018թ. ԵՏՄ անդամ Ռուսաստանի Դաշնությունից ստացել է ապրանքներ, որոնց ուղեկցող փաստաթղթերը, սակայն, Բագրատաշենի մաքսային կետում ապրանքների կշռման հետ առաջացած խնդիրների պատճառով տեղում չեն տրամադրվել բեռը փոխադրող ԱՁ Արմեն Մադոյան ընկերությանը՝ հետագայում դրանք Արարատյան մաքսատուն-վարչությունից ստանալու նպատակով: Ապրանքներն ուղարկվել են Մետէքսիմ Տերմինալ զննության և զննում կատարելուց հետո բաց են թողնվել՝ առանց ուղեկցող փաստաթղթերի: Փաստաթղթերը փոխադրող ընկերության միջոցով «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին են փոխանցվել 25.05.2018թ.: Փաստաթղթերը փաստացի ստանալուց հետո պարզվել է, որ վերը նշված ապրանքները ՀՀ սահմանը հատել են 27.04.2018թ., ինչը նշանակում է, որ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի կողմից արդեն իսկ ուշացված են եղել համապատասխան հայտարարագրի, հաշվետվությունների հանձնումը և հարկի վճարումը: Փաստաթղթերի բացակայության պարագայում անհնար է եղել իրականացնել հարկի հաշվարկն ու վճարումը, ինչի հետևանքով փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո՝ արդեն ժամկետների ուշացումով, 25.05.2018թ. ներկայացված հայտարարության հիման վրա 20.05.2018թ. դրությամբ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի մոտ առաջացել է չմարված հարկային պարտավորություն: Այդ օրվա դրությամբ անհասանելի է եղել նաև հարկային պարտավորությունների առցանց համակարգը և տեղեկացված չլինելով, որ իր մոտ առկա է հարկային պարտավորություն, «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՖՆ ԳՀԱՊՁԲ-18/31 գնանշման հարցմանը: Գնային առաջարկի ընդամենը գումարը կազմել է 105.000 ՀՀ դրամ: Ճանաչվելով առաջին տեղը զբաղեցրած մասնակից, վերը շարադրվածի հետևանքով «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն, փաստորեն, չի բավարարել գնանշման հարցման պահանջներին և իրենից անկախ՝ ֆորս մաժորային իրադարձությունների հետևանքով կարող է զրկվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից երկու տարի ժամանակով: Նշված հարկային պարտավորությունը մարվել է և 18.06.2018թ. դրությամբ Ընկերությունն ունի հարկային պարտավորությունների գծով գերավճար:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Արարատյան մաքսատուն-վարչությունում առկա չէ որևէ տվյալ Բագրատաշենի մ/կ-ի կողմից Արարատյան մաքսատուն-վարչությանը փաստաթղթերի հանձնման կամ Արարատյան մաքսատուն-վարչության կողմից այդ փաստաթղթերը «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի բեռը փոխադրող ընկերությանը հանձնման վերաբերյալ:

«Լիգա-Տեք» ՍՊԸ-ն հանդիսանալով պարտաճանաչ հարկ վճարող գրանցման օրվանից ի վեր, հաշվի առնելով իրենից անկախ տեղի ունեցած հանգամանքները և, որ գործունեության բնույթից ելնելով իր հիմնական վաճառքներն իրականացնում է մրցույթների արդյունքներում կնքվող պայմանագրերի շրջանակներում, խնդրում է Ձեզ չներառել «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ այդպիսով չնպաստել «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի հետագա գործունեության դադարեցմանը»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Լիլիթ Բայրամյանը և Կարեն Մարկոսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2018թ. թիվ 03/26-3/10747-18 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2018թ. թիվ 1/18-3/[1235950]-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/31 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 18.05.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 և 08.06.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի 18.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. տրված եզրակացությունը,

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ պիտակների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/31 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/31 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 05.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 1-ին կետով որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով նվազագույն գին առաջարկած մասկնակից ճանաչել «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին:

- 3-րդ կետով որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 3.717.796 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 08.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 3.717.796 ՀՀ դրամ գումարի չափով:

Նույն արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն 02.05.2018թ. Ռուսաստանի Դաշնությունից ստացել է ապրանքներ, որոնց ուղեկցող փաստաթղթերը, Բագրատաշենի մաքսային կետում ապրանքների կշռման հետ առաջացած խնդիրների պատճառով տեղում չեն տրամադրվել: Ապրանքներն ուղարկվել են Մետէքսիմ Տերմինալ զննության և զննում կատարելուց հետո բաց են թողնվել՝ առանց ուղեկցող փաստաթղթերի: Փաստաթղթերը «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին փոխանցվել են միայն 25.05.2018թ.: Փաստաթղթերը փաստացի ստանալուց հետո պարզվել է, որ վերը նշված ապրանքները ՀՀ սահմանը հատել են 27.04.2018թ., ինչը նշանակում է, որ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի կողմից արդեն իսկ ուշացված է եղել համապատասխան հարկի վճարումը: Փաստաթղթերի բացակայության պարագայում անհնար է եղել իրականացնել հարկի հաշվարկն ու վճարումը, ինչի հետևանքով փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո՝ արդեն ժամկետների ուշացումով, 25.05.2018թ. ներկայացված հայտարարության հիման վրա 20.05.2018թ դրությամբ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի մոտ առաջացել է չմարված հարկային պարտավորություն: Այդ օրվա դրությամբ անհասանելի է եղել նաև հարկային պարտավորությունների առցանց համակարգը և տեղեկացված չլինելով, որ առկա է հարկային պարտավորություն, Ընկերությունը մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարված մրցույթին:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին տրված քաղվածքը 18.06.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խրոհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ պիտակների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/31 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին
- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան

տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (25.05.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 3.717.796 ՀՀ դրամ:

- «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները առաջացել են Բագրատաշենի մաքսային կետում Ռուսաստանի Դաշնությունից ստացված ապրանքների կշռման հետ առաջացած խնդիրների պատճառով բեռնափոխադրման ուղեկցող փաստաթղթերը տեղում չտրամադրելու արդյունքում:

- բեռնափոխադրման ուղեկցող փաստաթղթերը «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին են փոխանցվել՝ 25.05.2018թ. և նշված փաստաթղթերը փաստացի ստանալուց հետո պարզվել է, որ ապրանքները ՀՀ սահմանը հատել են 27.04.2018թ.:

- «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն 18.06.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 25.05.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունն առաջացել է

բեռնափոխադրման ուղեկցող փաստաթղթերը Ընկերությանը 25.05.2018թ. փոխանցելու հետևանքով, հետևաբար «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում իրականացնելու հարկի հաշվարկումն ու վճարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության կողմից անկանխատեսելի իրավիճակից բխող հետևանքի առաջացման հանգամանքով, հետևաբար «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.06.2018թ. թիվ 03/26-3/10747-18 գրությամբ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

բեռնափոխադրման ուղեկցող փաստաթղթերը Ընկերությանը 25.05.2018թ. փոխանցելու հետևանքով, հետևաբար «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում իրականացնելու հարկի հաշվարկումն ու վճարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության կողմից անկանխատեսելի իրավիճակից բխող հետևանքի առաջացման հանգամանքով, հետևաբար «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.06.2018թ. թիվ 03/26-3/10747-18 գրությամբ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**